Հավելված
Ագարակի քաղաքապետի
2013թ. փետրվարի 19-ի թիվ 62(Ա) որոշման

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի՝ /ծածկագիրը 3.2-1 /

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի՝ /ծածկագիրը 3.2-1 / պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթներն են՝

աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ համայնքի բնակիչներներին տրամադրում է տեղեկանքներ, մասնակցում է համայնքի բնակչության ռեգիստրի վարման աշխատանքներին, օժանդակում է համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների, կրկնօրինակների և այլ կարգի տեղեկատվության տրամադրման աշխատանքներին, մասնակցում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի մոտ անցկացվող խորհրդակցությունների նախապատրաստման, կազմակերպման և արձանագրման աշխատանքներին, վարում է իրավական ակտերի և իրավական ակտերի հաշվառման մատյանները:

2. Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն,

բ) «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների, դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի, իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2013թ-ի մարտի 26-ին ժամը 15:00-ին, Ագարակի քաղաքապետարանի շենքում /ք. Ագարակ, Գարեգին Նժդեհ 5/:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և ՀՀ փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները Ագարակի քաղաքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/ ,

բ)տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

դ) մեկ լուսանկար՝ 3Х4 սմ չափսի,

ե) անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:

Քաղաքացիները մրցույթին ներկայացնում են անձնագրի, աշխատանքային գրքույկի, դիպլոմի, իսկ արական սեռի անձինք նաև՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 9:00 – 18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերին: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 12-ը մարտի 2013թ մինչև ժամը 18:00-ն:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Ագարակի քաղաքապետարանի աշխատակազմ /ք. Ագարակ, Գարեգին Նժդեհ 5, հեռ. 02862 23-50, 02862-25-67/ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչություն /ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. 2-35-50/:

/ՔԱՂԱՔԱՊԵՏ Մ.ԶԱՔԱՐՅԱՆ